# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
# Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

30 մայիսի 2017 թվականի N 76-Ա

## Ջ. ԲՈՒԲՈՒՇՅԱՆԻՆ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի «ա», 33-րդ հոդվածի 1-ին մասի «ժզ» կետերի և հիմք ընդունելով *Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2016 թվականի մայիսի 23-ի N 42-Ա կարգադրությունը՝* **կարգադրում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի քարտուղարության պետ ***(ծածկագիր՝ 66-2.1-7) Ջուլետտա Լևոնի Բուբուշյանին*** 2017 թվականի մայիսի 30-ից ազատել զբաղեցրած պաշտոնից:

2. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի քարտուղարության պետի ***(ծածկագիր՝ 66-2.1-7)*** լիազորությունների իրականացումը, *մինչև վեց ամիս ժամկետով,* դնել քարտուղարության վարչատնտեսական բաժնի պետ ***(ծածկագիր՝ 66-2.2-30) Մարտուն Մայիսի Պողոսյանի*** վրա մինչև քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնը մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված մասնակցի կողմից զբաղեցնելը՝ վճարելով նրանց աշխատավարձերի միջև եղած տարբերությունը՝ ***31 946*** *(երեսունմեկ հազար ինը հարյուր քառասունվեց)* ՀՀ դրամ:

3. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի քարտուղարությանը *(վարչատնտեսական բաժնին)* Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպել և անցկացնել հանձնման-ընդունման աշխատանքները և ներկայացնել համապատասխան արձանագրություն:

4. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչությանը *(հաշվապահական հաշվառման բաժնին)* կատարել վերջնահաշվարկ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

5. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ** — Կ. ԳՈՒԼՈՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԲԱԺԻՆ

**2017 թվականի մայիսի 30**
**ք. Հրազդան**